

Հայաստանում MONEYGRAM դրամական փոխանցումների
համակարգով անցկացվող ակցիայի կանոնները և պայմանները

1. Ակցիայի մասնակիցներն են 18 տարին լրացած բոլոր այն անձինք, ովքեր Հայաստանում ուղարկում կամ ստանում են գումար Moneygram դրամական փոխանցումների համակարգի միջոցով:

2. Ակցիան կանցկացվի Արդշինինվեստբանկի բոլոր մասնաձյուղերում 2010թ. սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

3. Ակցիայի ընթացքում այն անձը, ով Արդշինինվեստբանկի ցանկացած մասնաձյուղում կիրականացնի 200 (երկու հարյուր) ԱՄՆ դոլարից կամ 200 (երկու հարյուր) եվրոյից մինչև 999 (ինը հարյուր իննսունինը) դոլարի կամ 999 (ինը հարյուր իննսունինը) եվրոյի գործարք, կստանա մեկ շահող քարտ:

4. Ակցիայի ընթացքում այն անձը, ով կիրականացնի 1000 (հազար) ԱՄՆ դոլարի կամ 1000 (հազար) եվրոյի գործարք, կստանա շահող 2 քարտ, իսկ դրանից ավել յուրաքանչյուր 500 (հինգ հարյուր) ԱՄՆ դոլարի կամ 500 (հինգ հարյուր) եվրոյի գործարք կատարելու դեպքում կտրվի լրացուցիչ քարտ:

5. Շահող քարտը կարող է պարունակել մրցանակ՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ (ակնթարթային մրցանակ): Ակնթարթային մրցանակը հնարավոր է ստանալ միայն այն մասնաձյուղում, որտեղ տրվել է շահող քարտը ակցիայի ընթացքում ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան 2011թ. հունվարի 31-ը:

6. Յուրաքանչյուր ոք, ով ստանում է շահող քարտ, կարող է մասնակցել ամսական խաղարկությանը՝ լրացնելով քարտը ինչպես պահանջվում է և ներկայացնելով այն մասնաձյուղ, որտեղից նա ստացել է շահող քարտը: Յուրաքանչյուր ոք, ով ստանում է շահող քարտ, կարող է մասնակցել ամսական խաղարկությանը այնքան անգամ, որքան քարտ նա ստացել է յուրաքանչյուր օրացուցային ամսվա ընթացքում, որը նախորդում է ամսական խաղարկության ամսաթվին:

7. MoneyGram դրամական փոխանցումների համակարգի գործակալների կողմից գրանցումները կամ դրանց հաստատումները կամ ոչ ամբողջական կամ անընթեռնելի կամ գրանցման հրահանգներին անհամապատասխան մուտքերն ընդունելի չեն:

8. Ամսական խաղարկությունը տեղի կունենա հետևյալ օրերին՝ 2010թ. հոկտեմբերի 11-ին, 2010թ. նոյեմբերի 10-ին, 2010թ. դեկտեմբերի 10-ին և 2011թ. հունվարի 10-ին:

❖ Յուրաքանչյուր խաղարկության հաղթողի ընտրությունը կիրականացվի բոլոր գրանցումներից միայն մեկի պատահական ընտրությամբ նախորդ խաղարկության ամսաթվից սկսած մեկ ամսվա ընթացքում: Յուրաքանչյուր խաղարկության արդյունքում կընտրվի մեկ հաղթող:

9. Յուրաքանչյուր ամսական խաղարկության հաղթողի շահումը կլինի 200,000 (երկու հարյուր հազար) կանխիկ ՀՀ դրամ:

10. Մրցանակները կտրվեն կանխիկ՝ առանց որևէ այլընտրանքային առաջարկի:

11. Ամսական խաղարկության հաղթողը շահումի մասին անձամբ կտեղեկացվի փոստի/հեռախոսի միջոցով, որքան հնարավոր է շուտ, յուրաքանչյուր խաղարկության օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Միջոցառման կազմակերպիչը պետք է հրապարակի հաղթողի անունը www.moneygrampromo.am կայքում յուրաքանչյուր խաղարկության օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Բոլոր հնարավոր միջոցները կձեռնարկվեն հաղթողի հետ կապ հաստատելու համար, բայց եթե դա հնարավոր չլինի անել այն ժամանակահատվածում, որը նշված է 11-րդ կետում, և եթե հաղթողը Միջոցառման կազմակերպչի կայքում իր անվան հրապարակումից հետո 1 (մեկ) օրացուցային շաբաթվա ընթացքում կապ չհաստատի Միջոցառման կազմակերպչի հետ, ապա Միջոցառման կազմակերպիչն իրավունք ունի մրցանակը շնորհել ամսական վիճակահանության օրն ընտրված այլ ընտրանքային հաղթողին:

12. Միջոցառման կազմակերպիչը պետք է պահպանի հաճախորդների անձնական տվյալները, որոնք նշված են պաշտպանիչ շերտով քարտի վրա, և ուղարկման/ստացման Գործարքի ձևաթուղթը՝ համաձայն Միջոցառման կանոնների և այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է կազմակերպչին կատարելու իր պարտավորությունները հաղթողի նկատմամբ, առանց որևէ հավելյալ իրազեկման և հատուցման:

13. Ամսական խաղարկությունների շահողներից կարող է պահանջվել մասնակցել ակցիայի հետ կապված հրապարակային միջոցառմանը, որը կներառի լուսանկարում, իրենց անունների, ազգության և բնակության երկրի մասին տեղեկատվության հրապարակում: Հաղթողը պետք է վերցնի իր մրցանակն անձամբ, իսկ դրա հետ կապված տրանսպորտային ծախսերը չեն հատուցվում:

14. Բոլոր դեպքերում ակցիայի կազմակերպչի որոշումը միջոցառման շրջանակներում վերջնական է, և չի կարող վիճարկվել:

15. Մասնակցելով այս ակցիային՝ բոլոր մասնակիցները ընդունում ու առաջնորդվում են սույն պայմաններով ու կանոններով:

16. Ոչ Միջոցառման կազմակերպիչը, ոչ Արդշինինվեստբանկը, ոչ որևէ այլ անձ կամ կազմակերպություն, որը կապ ունի Միջոցառման հետ, պատասխանատու չէ որևէ վնասի կամ կորստի (ներառելով, սակայն չսահմանափակվելով անուղղակի կորստով կամ վնասով), տույժերի կամ երկարաձգման համար՝ կապված Միջոցառման մասնակցության կամ առաջարկվող մրցանակների հետ:

17. Ակցիայի կազմակերպիչն իրավունք ունի ակցիայի օրերը փոխելու կամ չեղյալ հայտարարելու կամ ավարտելու ակցիան ցանկացած ժամանակ՝ առանց պարզաևստրման կամ հատուցման, եթե հանգամանքներն անխուսափելի են:

18. Միջոցառման մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք զանգահարել Ակցիայի կազմակերպչի Թեժ Գիծ՝ (010) 21-03-01 կամ Արդշինինվեստբանկի հետևյալ համարով՝ (010) 59-05-66: Ձանգերը կլինեն զանգահարողի հաշվին՝ համաձայն նրա հեռահաղորդակցության օպերատորի սակագների:

Թեժ գծի աշխատանքային օրերը՝ յուրաքանչյուր երկուշաբթիից ուրբաթ (բացի տոն օրերից), ժամը 10:30-ից մինչև 19:30-ը: